ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ուսուցչի համագործակցությունը գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով

Անցկացման վայր՝ Մարտունի

Աշխատանքի ղեկավար՝ Հասմիկ Բեյբության

Ուսուցիչ՝ Արմինե Գալստյան

Դպրոց՝ Արծվանիստի միջնակարգ դպրոց

Մարտունի 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

1.Գրական ակնարկ

1.1 Դպրոցում մանկավարժական աշխատողների միջև մանկավարժական օրինակելի փորձի փոխանակումը՝ որպես ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպման բաղադրիչ……5

1.2 Ուսուցիչների փոխգործակցությունը դպրոցի առարկայական մասնախմբերի շրջանակներում……10

1.3 Ուսուցիչների համագործակցությունը դպրոցում, ինտեգրված դասերի կազմակերպում……14

Եզրակացություններ……17

Առաջարկություններ……18

Օգտագործված գրականության ցանկ……19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթական բարեփոխումների հիմքում ընկած է նոր ժամանակի հրամայականներին համապատասխանող որակի կրթություն ունենալու անհրաժեշտությունը: Այս գործընթացն իրենից ենթադրում է ուսումնական գործընթացի բոլոր ասպեկտնորում իրականացնել շրունակական բարեփոխումներ ու արդիականացում՝ այդ թվում ուսուցիչների մասնագիտական որակների բարձրացում, զինում ժամանակակից մանկավարժամեթոդական հնարներով, անդադար ինքնակրթման ու ինքնազարգացման գործընթաց:

Այստեղ ուսուցիչը չի կարող սահմանափակվել ինքնուրույն գործունեությամբ. ինքնակրթության, ինքնազարգացման գործընթացներին գալիս է փոխլրացնելու աշխատանքային համագործակցությունը այլ մանկավարժական աշխատողների հետ՝ նպատակ ունենալով ամբողջացնել ողջ մանկավարժական ներուժը:

Առհասարակ, ցանկացած բնագավառում խրախուսվում է կոլեկտիվ աշխատանքը: Ժողովրդական իմաստությունն ասում է՝ «Մեկ ձեռքը ձեռք է լվանում, երկու ձեռքը՝ երես»: Սա կարելի է դիտարկել որպես նախաձեռնության կարգախոս, որը կենսունակ է ոչ միայն ուսուցիչների համագորակցության, այլ նաև կրթական համագարգի այլ շահառուների համագործակցության պարագայում, օրինակ՝ սովորող-ուսուցիչ, ծնող-դպրոց: Ասվածից կարող ենք եզրահանգել, որ ցանկացած միջավայրում փոխօգնությունը, համագործակցությունը, օրինակելի փորձի փոխանակումը, այդ փորձի հիման վրա սեփական քայլերի մշակումը այն սկզբունքներն են, որոնց հիման վրա կարելի է կառուցել արդյունավետ գործունեություն:

Այսպիսով, կարծում ենք, որ ուսումնական հաստատությունում շատ կարևոր է մանկավարժական աշխատողների միջև բարիդրացիական հարաբերությունների հաստատումը, ինչը կարող է ստեղծել գործընկերային ու համագործակցային առողջ միջավայր: Վստահաբար կարող ենք ասել, որ նման պարագայում աշխատանքը դպրոցում կլինի էլ ավելի համակարգված ու արդյունավետ՝գործունեության հիմքում դնելով սովորողների որակյալ ու ժամանակակից կրթություն ստանալու իրավունքը:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Թեմայի արդիականությունը պայմանավորված է կրթական համակարգում գործընկեր ուսուցիչների մեջ համագործակցային ու փոխօգնության միջավայրի ձևավորման՝որպես կրթության որակի բարձրացման բաղադրիչ կարևորմամբ, որից էլ կախված է ուսումնական գործընթացի բարձր որակը:

Հետազոտության նպատակը: Ցույց տալ ուսուցչների արդյունավետ փոխգործակցության դերը վերջիններիս մոտ մի շարք կենսական նշանակության կարողությունների ու հմտությունների ձևավորման, նաև մասնագիտական որակների զարգացման համատեքստում:

Հետազոտության խնդիրը: Հետազոտության խնդիրն է սահմանել դպրոցում մանկավարժական աշխատողների համագործակցության, նրանց միջև մանկավարժական օրինակելի փորձի փոխանակման եղանակները, ինչպես նաև ցույց տալ ինտեգրված դասերի անցկացման կարևորությունը սովորողների իմացական և գործառական կարողությունների ձևավորման ու զարգացման համար:

1.1 Դպրոցում մանկավարժական աշխատողների միջև մանկավարժական օրինակելի փորձի փոխանակումը՝ որպես ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպման բաղադրիչ

Ժամանակակից հասարակությունների գլխավոր խնդիրներից մեկը դարձել է կայուն զարգացումը, իսկ դրան հասնելու ճանապարհին փոփոխությունների վճռորոշ գործոնն, անշուշտ, կրթությունն է: Կրթությունը՝ հանուն կայուն զարգացման, դարձել է արդի կրթական համակարգերի բարեփոխման գլխավոր ուղենիշը: Այս համատեքստում որպես առաջնահերթություն է դառնում թե' ուսուցման գործընթացի հիմնական պատասխանատուների՝ ուսուցիչների, թե' առաջնային շահակիցների՝ սովորողների դերի համարժեք կարևորումը:Կրթության (ուսուցման և դաստիարակության) հարացույցի փոփոխությունը ենթադրում է.

- մանկավարժական հարաբերությունների վերակողմնորոշում դեպի սովորողի անձը՝ հաշվի առնելով վերջինիս ներուժի և մարդկության պատմամշակութային լավագույն նվաճումների հարաբերակցությունը,
- սովորողի ինքնավարության ձևավորում, նրա ստեղծագործական կարողությունների, քննադատական մտածողության զարգացում,
- սովորողների ճանաչողական գործունեության կառավարում:

Միաժամանակ ուսուցման համակարգը ենթադրում է սովորողի տարիքային, անհատական-հոգեբանական (դրդապատճառներ, հետաքրքրություններ) և ազգային առանձնահատկությունների առավելագույն հաշվառում և նրա պահանջմունքների բավարարում[1]:

Կրթության պահանջների բնականոն իրականացումը մեծապես պայմանավորված է ուսուցչի աշխատանքից. որքան բարձր են վերջինիս մասնագիտական ու մարդկային որակները, ինքնազարգանալու, նորը սովորելու ցանկությունը, այդքան ուսուցիչը շատ բան ունի տալու մատաղ սերնդին: Ուստի կարող ենք ասել, որ ՀՀ կրթական համակարգում հաղթանակներն ու պարտությունները կախված են այդ թվում նաև ուսուցչի աշխատանքից:

Բոլոր ուսուցիչներն իրենց աշխատանքային գործընթացում և մասնագիտական զարգացման ընթացում պետք է կարողանան հաշվի առնել իրենց առարկաների հիմքը, դրսևորել քննադատական մոտեցում, կապել այլ ոլորտների և բնագավառների, ինչպես օրինակ՝ քաղաքացիության հետ, և հետազոտել դրանց սոցիալական ծառայությունը, ժամանակակից մշակույթի հետ դրանց

[1] https://aspu.am/website/images/old/upload/file/Hayecakargh.pdf ՀՊՄՀ,Մանկավարժական կրթության զարգացման հայեցակարգ, Երևան, 2014, էջ 11:

փոխհարաբերությունը, որպես համընդհանուր արժեք՝ խթանել հանդուրժողականությունը, հավասարության խնդիրները, բազմազանությունը և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը:

Այն ուսուցիչները, ովքեր ավելի փորձառու են, քաջատեղյակ են ավելի հետաքրքիր, արդյունավետ և համարձակ դասավանդման մեթոդներին: Այս պարագայում հավանականությունն ավելի մեծ է, որ վերջիններս կարող են կառուցել արդյունավետ անհատական դասեր և ապահովել շարունակական ուսուցում: Նրանք ի վիճակի են կազմել և ընտրել դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցառումներ, որոնց միջոցով համապատասխանաբար զարգացվում են աշակերտների ըմբռնումը և հմտությունները:

Եթե ուսուցիչն ունի կոնցեպցիաների և սկզբունքների մասին միայն սահմանափակ գիտելիքներ, դժվար թե նա ցանկանա աշակերտներին ներգրավել ժողովրդավարական քաղաքացիության բարդ հայեցակետերում և ավելի հավանական է, որ կդասավանդի դիդակտիկ եղանակով՝ կանխելով աշակերտների մասնակցությունը և հարցադրումները, ինչով կսահմանափակվեն սովորողների փորձառության զարգացման հնարավորությունը:

Հենց այստեղ է ծագում անհրաժեշտություն, որ դպրոցում ավելի կայացած ու փորձառու ուսուցիչները ամեն կերպ փորեն նեցուկ լինել սկսնակ կամ ոչ փորձառու ուսուցիչներին՝կիսվելով վերջիններիս հետ իրեն մեթոդամանկավարժական գիտելիքներով, տեղեկատվական հոսքերի կառավարման փորձառությամբ: Իհարկե, ուսուցիչների հիմնական մասը տիրապետում է իր գործառույթների հիմնական շրջանակին, այդ թվում՝ դասի ընթացքում բովանդակության և նպատակների ներկայացման, անցումային կետերի ազդանշման և հիմնական կետերի ամփոփման առումներով: Այնուամենայնիվ, դա բավական չէ ուսուցման գործընթացն արդյունավետ ու ստացված համարելու համար:

Ուսուցիչը պետք է կարողանա հստակ ներկայացնել մի շարք հիմնական գաղափարների շուրջ իր տեսլականը, ունենա համապատասխան առարկայական բառապաշար, կարողանա կիրառել գործուն հարցադրումներ, որոնք համապատասխանում են դասի ուղղվածությանը:

Ինչպես նշել էինք, ուսուցիչների միջև մանկավարժական օրինակելի փորձի փոխանակումը կարելի է դիտարկել ուսումնադաստիարակչական գործընթացի ավելի արդյունավետ կազմակերպման համատեքստում: Այս առումով կարևոր ենք համարում նորարար ու նախաձեռնող ուսուցիչների դերը: Վերջիններս պետք է բաց լինեն համագործակցության համար, փորձեն ուղղորդել պակաս փորձառու կադրերին: Մանկավարժական աշխատողն իրավունք ունի համագործակցել

գործընկերների հետ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով[2]: Փորձի արդյունավետ փոխանակումը և համագործակցությունը դպրոցում կախված է ոչ այնքան ուսուցչի մասնագիտական, որքան անձնային որակներից: Ուսուցչի անձնային որակներից են.

- Սերը երեխաների նկատմամբ;
- Համբերություն, օբյեկտիվություն;
- Անարդարության նկատմամբ անհանդուրժողականություն;
- Քաղաքացիական օրինապաշտություն, քաղաքացու իրավունքներն ու պարտականությունները զուգորդելու գիտակցություն;
- Հարգանք երեխայի ազատության և իրավունքների նկատմամբ ու դրանք պաշտպանելու պատրաստակամություն և կարողություն;
- Մշտապես ինքնակրթությամբ և ինքնակատարելագործմամբ զբաղվելու գիտակցություն և մասնագիտական ու ընդհանուր զարգացումը պլանավորելու և իրականացնելու կարողություն;
- Հասարակության մեջ և կրթության ոլորտում գոյություն ունեցող թերությունների դեմ պայքարելու, դրանցից դպրոցը զերծ պահելու գիտակցություն և պատրաստակամություն:

Հանրակրթական դպրոցում ուսուցիչների համագործակցության գործընթացը պետք է իրականացվի անշահախնդիր, ամեն մեկն այստեղ չպետք է փնտրի անձնական շահ, հիմնական վերջնարդյունքը պետք է սահմանել՝ հաշվի առնելով սովորողի շահը: Այս առումով համագործակցող ուսուցիչները պետք է՝

- Կարողանան դրսևորեն քննադատական մտածողություն սեփական աշխատանքի նկատմամբ՝ միտում ունենալով ավելի կատարելագործել այն;
- Հարկավոր է պատրաստ լինեն խնդիրների լուծման թիմային եղանակին;
- Կարևոր է գլոբալ հարցերին լուծում տալու համար պատրաստ լինել համակործակցային աշխատանքին;
- Հաճախակի հանդես գան հարցադրումներով, միասին փնտրեն ելքեր այս կամ այն խնդրի վերաբերյալ;

[2] https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀ Հանրակրթության մասին օրենք:

- Փաստարկների բերեն՝ հիմնավորելով կրթական զանազան հարցերի շուրջ նիրենց դիրքորոշումը;
- Չվախենան առողջ բանավեճից;
- Ունենան անվերապահ վստահություն գործընկերոջ նկատմամբ;
- Հնարավոր կոնֆլիկտները լուծեն՝պահպանելով բարեվարքության կանոնները:
- Կիսվեն նորարար գաղափարներով;
- Հաճախ վերանայեն իրենց մոտեցումները, ինքնաանդրադարձ կատարեն:

Կրթական միջավայրի մարտահրավերները կառավարելու, մասնագիտական կոմպետենցիաները զարգացնելու, ուսուցման տարբեր ռազմավարություններ մշակելու և իրականացնելու ժամանակ շատ կարևոր է համագործակցային միջավայրի ստեղծումը գործընկեր ուսուցիչների համար: Ուստի ուսուցիչներին պետք է միավորի փոխադարձ վստահությունը, թիմային համերաշխությունը, միմյանց աջակցելու ազնիվ մղումն ու պատրաստակամությունը: Աշխատանքային միջավայրում յուրաքանչյուր ուսուցիչ պարտավոր է պաշտպանել ոչ միայն իր, այլև գործընկերոջ հեղինակությունը: Նա չպետք է նսեմացնի գործընկերներին սաների կամ այլ անձանց ներկայությամբ:

Համագործակցային հարաբերություններում կարևոր է նաև քննադատական մտածողությունը, սակայն քննադատությունը և դիտարկումը պետք է լինի անաչառ և հիմնավոր, կառուցողական, տակտի զգացումով, բարյացակամ և ոչ վիրավորական: Անընդունելի է քննադատության ենթարկվող մարդուն ստորացնելը, հիմնախնդիրները պետք է լուծվեն ուսուցիչների ազատ և բաց քննարկումների միջոցով: Մանկավարժական աշխատողը պարտավոր է պահպանել ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները[3]:

Այսպիսով, նպատակ ունենալով հիմնավորել ուսուցիչների համագործակցության ու փորձի փոխանակման կարևորությունը դպրոցում, նշենք նաև, որ անչափ կարևոր է, որպեսզի ուսուցիչը չկաշկանդվի համագործակցության կամ փորձի փոխամակման ժամանակ: Այս գործընթացում անչափ կարևոր է նաև փոխադարձ դասալսումների դերն ու ուսուցչի աշխատանքը դպրոցի առարկայական մասնախմբերում, որոնց մասին կխոսենք հետազոտության մյուս ենթաբաժիններում:

[3] https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀՀանրակրթության մասին օրենք:

1.2 Ուսուցիչների փոխգործակցությունը դպրոցի առարկայական մասնախմբերի շրջանակներում

Ուսուցիչների ջանքերը, որոնք ուղղված են ուսումնական գործընթացի արդյունավետ ընթացքին, միշտ էլ արդարացված են: Դրա վառ ապացույցը սովորողների զանազան նվաճումներն ու ձեռքբերումներն են: Իսկ արգասաբեր գործելու համար ուսուցիչը պետք է կանոնակարգի ու համակարգի իր աշխատանքը՝ անդադար քայլելով նոր մտքերի, կարողությունների, հմտությունների ու տեխնոլոգիաների հետևից: Ուսուցիչին նման հնարավորություն է ընձեռում փոխգործակցային աշխատանքը հանրակրթական ուսումնական հաստատության խորհրդակցական մարմին համարվող առարկայական մեթոդական միավորման ներսում, որտեղ ուսուցիչն ունի անսահմանափակ հնարավորություններ սեփական մասնագիտական պահանջմունքները բավարարելու համար: Մեթոդական միավորումները/առարկայական մասնախմբեր/ ուսումնական հաստատության մեթոդամանկավարժական գործունեության հիմնական կառուցվածքային տարրերն են, որոնք իրականացնում են ուսումնական, դաստիարակչական, մեթոդական և արտադասարանական աշխատանքների համակարգումը դպրոցում:

Ստացվում է, որ մեթոդական միավորումների աշխատանքը բազմաբնույթ է: Այն միտված է ուսուցչի մասնագիտական որակների բարձրացմանը՝ խրախուսելով կոլեկտիվում աշխատելու և համագործակցելու վերջինիս ցանկությունը: Առարկայական մեթոդական միավորման բոլոր անդամներն ունեն հավասարազոր իրավունքներ ու պարտականություններ: Իրենց կատարած աշխատանքով վերջիններս հաշվետու են մեթոդական միավորման նախագահին, ով ի պաշտոնե համակարգում է միավորման աշխատանքները՝ դրանք ամփոփելով միավորման նիստերի ժամանակ: Առարկայական մեթոդական միավորումների նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ: Սահմանված կարգով նիստերն արձանագրվում են[4]:

Մանկավարժական այս օղակի գործունեության հենքում մանկավարժական որակների բարձրացումն է, որն ուղղակի կերպով պայմանավորում է ուսումնական գործընթացում կրթական չափորոշչով սահմանված վերջնարդյունքների ի կատար ածումը, ուստի կարելի է ասել, որ յուրաքանչյուր ուսուցիչ կարող է իր օրինակով խրախուսել մյուսին՝ ի նպաստ կրթական համակարգի բարելավման և ուսումնական գործընթացի անցնցում իրականացման:

[4] https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀ Հանրակրթության մասին օրենք:

Ժամանակակից կրթությունն ուղղված է սովորողների մտածողության, մասնագիտական նախաձեռնողականության, ինքնուրույնության զարգացմանը, ինչը կապահովի մրցունակ մասնագետի պատրաստումը: Այդպիսի մասնագետը ունակ կլինի հարմարվել ցանկացած սոցիալական միջավայրին, ծավալել աշխատանքային որոշակի գործունեություն, ինքնակրթվել և ինքնուրույնանալ: Կրթական գործընթացում, որպես երաշխավոր, ինքնուրույն մտածողության ձևավորող ու գործունեության արդյունքների կանխատեսող հանդիսանում է ուսուցիչը: Հենց այդ պատճառով բարձրացել է պահանջարկը որակյալ, ստեղծագործական մտածողություն ունեցող, կոմպետենտ ու նախաձեռնող, մրցունակ ուսուցչի նկատմամբ, ով ունակ է արդի, դինամիկ աշխարհում ձևավորել համակողմանի զարգացած անձնավորություն:

Աշխատանքը մեթոդական միավորումների շրջանակներում ուսուցչին հնարավորություն կտա արագ ու նպատակային կերպով ձեռք բերել անհրաժեշտ կարողունակություններ, որոնք պարտադիր պայմանն են որակյալ կրթական համակարգ ունենալու համար: Մասնագիտական դիրքորոշումները՝ որպես անհատական դինամիկ որակներ, ինտեգրում են ուսուցչի գիտակցական ուղղվածությունը, պրոֆեսիոնալ վարքը, անձնային և մասնագիտական արժեքները: Դրանք անմիջականորեն կապված են ուսուցչի անհատական մանկավարժական և մեթոդական մշակույթի զարգացման մակարդակի հետ և համարվում են նրա մանկավարժական արդյունավետ գործունեության գրավականը: Ներկայացված են այն կոմպետենցիաները, որոնց պետք է տիրապետի ուսուցիչը մասնագիտական պատրաստության, մանկավարժական գործունեության և վերապատրաստման արդյունքում: Դիտարկված են ժամանակակից դպրոցում ուսուցչի մասնագիտական կայացմանը նպաստող գործոնները, մասնավորապես առարկայական մեթոդական մասնախմբերի գործունեությունը, որի հիմնական ուղղությունները պետք է լինեն՝

- մանկավարժական նոր տեխնոլոգիաների փորձաքննությունը և փորձարկումը, տեղեկատվական տարբեր միջոցների կիրառումը,
- սովորողների ուսումնահետազոտական գործունեության կազմակերպման ինովացիոն ձևերի ներդնումը,
- դպրոցում կրթական ծրագրերի, մեթոդական ապահովման կատարելագործումը,
- ուսուցիչների մանկավարժական վարպետության ձևավորումը, մասնագիտական զարգացումը և կայացումը,

- կրթության որակի ապահովումը: Այս ուղղություններից ելնելով՝ մենք համարում ենք ուսուցիչների հետ տարվող աշխատանքների նախագծումը, դասալսումները, ցուցադրական դասերը, սեմինար պարապմունքները, մանկավարժական ընթերցումները, որոնք մենք համարում ենք առաջավոր փորձի տարածման լավագույն միջոցներ:

Բերենք մեթոդական միավորման ներսում ուսուցիչների համագործակցության մի քանի իրավիճակային օրինակներ: Հումանիտար առարկաների մեթոդական միավորման նախագահը մեկ այլ ուսուցչի հետ ներկայանում է սկսնակ ուսուցչի դասին, որպեսզի իրականացնի փոխադարձ դասալսում: Դասալսման նպատակը դասի փուլերի փոխկապակցվածության և մեթոդների կիրառության արձանագրումն է: Արդյունքում արձանագրվում է, որ դասի փուլերը լղոզված էին, մեթոդները բացակայում էին, այլ խոսքով՝ դասը չէր ծառայում նպատակին, և ուսուցիչը դասի ավարտին չկարողացավ հասնել չափորոշչային պահանջներին: Պետք է հետևողական լինել, որ արձանագրված խնդիրը ստանա համապատասխան լուծում, ուսուցիչը հասկանա՝որտեղ է իր բացթողումը և իրավիճակը շտկվի: Այդ նպատակով գումարվում է արտահերթ մեթոդական միավորման նիստ՝ սահմանելով հետևյալ օրակարգը.

- Ուսուցիչները պետք է հանդես գան դասի ընթացքում մեթոդների կիրառման իրենց փորձի մասին մեթոդական զեկույցներով;
- Զեկույցները պետք է ներկայացվեն սահիկաշարի օգնությամբ;
- Քննարկման միջոցով պետք է պարզաբանվեն մեթոդների կիրառության առավելություններն ու թերությունները՝ հենվելով կոնկրետ օրինակների վրա;
- Փորձառու ուսուցիչները պետք է ունենան ելույթներ՝ դասի տիպերին, փուլերին վերաբերվող;
- Տեղում պետք է կատարվեն առաջադրանքներ:

Ստացվեց, որ մեթոդական միավորման նախագահը, պահպանելով մանկավարժական էթիկան, խնդրին տվեց համակարգային լուծում: Անշուշտ, կոնկրետ ուսուցիչը ծանոթացավ դասալսումների մատյանում արված արձանագրությանը, միավորման նախագահի հետ քննարկեց, վերլուծեց իր բացթողումները, սակայն դա չդիտարկվեց որպես խարան: Միավորման ներսում իրականացրած աշխատանքը նպաստեց, որ այլոց օրինակն ու սեփական վերլուծությունը համադրելով՝ սկսնակ, ոչ փորձառու ուսուցիչը հնարավորություն ունենա գործնականում հասկանալ իր սխալն ու լուծումներ գտնել: Մանկավարժական այս օղակի գործունեության հենքում մանկավարժական

որակների բարձրացումն է, որն ուղղակի կերպով պայմանավորում է ուսումնական գործընթացում կրթական չափորոշչով սահմանված վերջնարդյունքների ի կատար ածումը, ուստի կարելի է ասել, որ յուրաքանչյուր ուսուցիչ կարող է իր օրինակով խրախուսել մյուսին՝ ի նպաստ կրթական համակարգի բարելավման և ուսումնական գործընթացի անցնցում իրականացման:

Մեթոդական միավորումներն իրենց աշխատանքը պլանավորելիս պետք է հաշվի առնեն կրթության առաջնային շահակիցների՝ սովորողների շահերը: Ստացվում է, որ սովորողը նույնպես որոշակի կերպով, թեկուզ անուղղակի մասնակցում են կրթական համակարգի այս կամ այն օղակի աշխատանքներին: Սովորողների մասնակցությունը կրթական գործընթացին ենթադրում է, որ նրանք պետք է դառնան այդ գործընթացի գործընկերային կողմ՝ իրենց դերերով, պատասխանատվությամբ ու իրավասության շրջանակով: Այս սկզբունքի համաձայն սովորողի ու ուսուցչի միջև պետք է գործի համագործակցություն, վստահություն, և հարգանք, քանի որ կրթողները իրենց ևս սովորողներ են և սովորողը կարող է աղբյուր հանդիսանալ կրթողի համար նոր գիտելիքների ձեռքբերման համար[5]:

Կարծում ենք, որ ամեն բան ուսուցչի ձեքում է:Ուսուցիչն ինքը պետք է նախաձեռնող լինի, փորձի ամեն բան անել, որպեսզի կարողանա ունենալ մասնագիտական բարձր որակներ, համապատասխանի կրթական համագարգի՝ ուսուցչից պահանջվող նոր պահանջներին: Իսկ դրան հասնելու միակ նպատակը գործընկերների հետ կառուցողական փոխհարաբերություններն են, աշխատանքի հանդեպ մոտիվացիան, ինքնակրթվելու և ինքնանդրադարձ կատարելու ցանկությունը: Վստահ ենք, որ կրթության բնագավառում գրանցվող մեծագույն հաջողությունները հենցնման ուսուցիչներին են պատկանում, ուստի կարծում ենք, որ նմանօրինակ հետազոտությունները ևս մեծ ազդեցություն կարող են ունենալ մեր՝ ուսուցիչներիս հաջողությունների վրա:

Այսպիսով, ուսումնասիրելով հիմնախնդիրը, եկանք եզրակացության, որ ուսուցչի մասնագիտական կարողունակությունների զարգացումն արդի կրթական պահանջների արտացոլանքն է: Ինչպես նաև արձանագրեցինք, որ ուսուցչի մասնագիտական որակների բարձրացման համար անգնահատելի է համագործակցությունը գործընկերների հետ՝ ինչպես ուղիղ, այնպես է առարկայական մասնախմբերի աշխատանքների շրջանակներում:

[5] http://ipp.am/wp-content/uploads/2018/01/Research-on-Quality-of-education01.08.2017.pdf Կրթության որակի ընկալումները հանրակրթական համակարգում, էջ 4:

1.3 Ուսուցիչների համագործակցությունը դպրոցում, ինտեգրված դասերի կազմակերպում

Ինտեգրված դասը դասի հատուկ տեսակ է, որի շրջանակներում մեկ հասկացության ուսուցման ժամանակ տեղի է ունենում մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը: Այսպիսի դասի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ, որը նպաստում է ուսուցանվող նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը: Ինտեգրված դասերը կարող են միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ: Ինտեգրված դասի պլանավորումը ենթադրում է տարբեր առարկաների ուսուցիչների համագործակցություն: Ուսուցիչը նախ դիմում է իր այն կոլեգային, ում դասավանդած առարկան պետք է ինտեգրվի իր առարկայի հետ:

Երկու ուսուցիչներ պարզում և որոշում են իրենց առարկաների համատեղ հետաքրքրությունը: Այստեղ շատ կարևոր է ուսուցիչների փոխգործունեության ճիշտ կազմակերպումը, քանի որ նրանցից յուրաքանչյուրի գործողությունների հաջորդականության արդյունավետությունից է կախված ինտեգրված դասի որակը: Ինդեգրված դասի ժամանակ ինտեգրվող առարկաների բաղադրիչները կարող են լինել ավել կամ պակաս: Ցանկացած ինտեգրված դաս նպատակ ունի դուրս գալու մեկ առարկայի նեղ շրջանակներից: Դասի ընթացքում կարելի է ինտեգրել մանկավարժական գործընթացի ցանկացած բաղադրիչ՝ նպատակ, բովանդակություն, ուսուցման մեթոդ և միջոց:

Տարբեր առարկաներից վերցրած այս բաղադրիչները, որոնք միավորվում են մեկ դասի մեջ, կազմում են մեկ համակարգ, որի շուրջ հավաքվում և մի նոր համակարգ է դառնում ուսումնական նյութը: Որպեսզի ինտեգրվեն, այսինքն՝ ճիշտ ձևով միավորվեն ուսումնական գործընթացի բաղադրիչները, պետք է կատարվեն այնպիսի գործողություններ, որոնք ի սկզբանե ունեն ստեղծագործական բնույթ: Այս նախապատրաստական գործունեության ընթացքում առանցքային նշանակություն ունեն ուսուցիչների համագործակցելու, իրարից սովորելու, ընդհանուր նպատակներ ու խնդիրնել գտնելու կարողությունները:

Ելնելով ինտեգրված դասի տեսակից և ինտեգրվող առարկաների դասերի տիպերից՝ ուսուցիչները համատեղ կազմում են իրենց դասի նպատակները՝ զուգակցելով ընդհանուրը մասնավորի հետ, շաղկապելով ինտեգրվող նյութի բովանդակությունները տարբեր առարկաների տեսանկյուններից:

Միջառարկայական կապերի ստեղծումը ինտեգրված դասերի ժամանակ իրականացնում է մեթոդոլոգիական, կրթական, զարգացնող, դաստիարակչական,

կառուցողական գործառույթներ: Ուսուցիչը միջառարկայական կապերի միջոցով նպաստում է սովորողների գիտելիքների ինտեգրմանը, բազմակողմանի զարգացմանը, ինտելեկտի կատարելագործմանը, մտահորիզոնի ընդարձակմանը:

Միջառարկայական կապերը խթանում են սովորողների՝ դիտարկելու, հետազոտելու, հայտնագործելու, ստեղծագործելու, եզրահանգելու կարողությունների ձևավորմանը: Միջառարկայական կապերի իրականացման ձև են ինտեգրված դասերը: Ինտեգրված դասը պահանջում է կրթության գործընթացի մասնակիցների՝ ուսուցիչների, սովորողների, ծնողների, վարչական աշխատողների համագործակցությունը: Հանրակրթական դպրոցում աշխատուղ յուրաքանչյուր ուսուցիչ պարտավոր է ոչ միայն գերազանց տիրապետել իր մասնագիտությանը որպես մանկավարժ, այլև որոշակի ինֆորմացիոն պաշարներ ունենալ նաև հարակից առարկաներից:

Ցանկացած ինտեգրված դաս նպատակ ունի դուրս գալու մեկ առարկայի նեղ շրջանակներից: Այսպիսի դասի կազմակերպմամբ կարելի է հաղթահարել խնդրի մակերեսային և ձևական ուսումնասիրությունը, ընդլայնել ինֆորմացիան, փոփոխել ուսումնասիրության շրջանակները, հստակեցնել հասկացություններն ու օրենքները, ընդհանրացնել թեման, միավորել սովորողների փորձն ու դրա ըմբռնման տեսական մասը, համակարգել ուսումնասիրված նյութը: Միջառարկայական կապերը դրդում են սովորողներին հետազոտական գործունեության, արթնացնում հետաքրքրություն առարկայի նկատմամբ:

Այստեղ շատ կարևոր է ուսուցիչների փոխգործունեության ճիշտ կազմակերպումը, քանի որ նրանցից յուրաքանչյուրի գործողությունների հաջորդականության արդյունավետությունից է կախված ինտեգրված դասի որակը: Ինդեգրված դասի ժամանակ ինտեգրվող առարկաների բաղադրիչները կարող են լինել ավել կամ պակաս: Ցանկացած ինտեգրված դաս նպատակ ունի դուրս գալու մեկ առարկայի նեղ շրջանակներից: Բերենք ինտեգրված դասի մեկ օրինակ.

ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍ

Հայոց պատմություն և ինֆորմատիկա առարկաներից

Դասի թեման

- **Հայոց պատմություն՝** «Հայոց ցեղասպանություն»
- **Ինֆորմատիկա՝** «Microsoft Word» տեքստային խմբագրիչ

Դասի նպատակը

- *Կարողանալ աշխատել* «Microsoft Word» տեքստային խմբագրիչով
- *Կարողանալ համացանցից գտնել օգտակար տեղեկատվություն հանձնարարված թեմայի վերաբերյալ*
- *Պատրաստել հետազոտական աշխատանք* «Հայոց ցեղասպանություն» թեմայով և ներկայացնել

Դասին կկիրառվի խմբային աշխատանք

Համացանցային բաց հարթակներից, էլեկտրոնային գրքերից հավաքագրված տեղեկությունների հիման վրա սովորողներին կառաջարկվի կազմել հետազոտական աշխատանքներ թեմայի վերաբերյալ՝օգտվելով **«Microsoft Word»** տեքստային խմբագրիչից: Նախօրոք կազմված խմբերը կաշխատեն հավաքել տեղեկատվություն և **«Microsoft Word»** տեքստային խմբագրիչի միջոցով կատարել աշխատանքը: Խմբերը կներկայացնեն իրենց աշխատանքները հերթով: Դասի ավարտին կստանանք հետևյալ արդյունքները՝

- Սովորողները կխորացնեն իրենց գիտելիքները հայոց պատմություն առարկայից,
- Համացանցում կկարողանան կառավարել տեղեկատվական հոսքերը՝ գտնելով արժանահավատ աղբյուրներ,
- Կհմտանան **«Microsoft Word»** տեքստային խմբագրիչի գործածության մեջ,
- Կկարողանան տարբերել կարևոր և երկրորդական տեղեկատվությունը,
- Կսովորեն օգտվել էլեկտրոնային գրադարաններից:

Այսպիսով, կարծում ենք, որ ինտեգրված դասերի կազմակերպման ընթացքը բավականաչափ արդյունավետ կարող է լինել մասնակից ուսուցիչների համար: Սա համագործակցման ու փորձի փոխանակման անմիջական գործընթաց է, որի ժամանակ բոլոր ուսուցիչները հավասարաչափ ջանք են գործադրում, որպեսզի ուսուցման գործընթացը լինի աարդյունավետ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կրթության որակի բարելավումը պահանջում է, որ ուսուցիչը ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրատվածություն և բարոյական որակներ, կարևորի սովորելու և սովորեցնելու ժամանակակից մեթոդները, կատարելագործի մասնագիտական կարողությունները, պարբերաբար մասնակցի վերապատրաստման դասընթացների, զբաղվի ինքնակրթությամբ: Ուսուցչի առաջընթացի համար կարևոր է նաև համագործակցային հարաբերությունների հաստատումը գործենկերների հետ, ինչն էլ ուսումնասիրեցինք մեր հետազոտության ընթացքում: Բերենք մի քանի դիարկումներ մեր ուսումնասիրությունից.

- ✓ Ուսուցիչը պետք է մեծագույն պատասխանատվությամբ ձգտի մասնագիտական զարգացման թե' անհատական, թե' գործընկերների հետ համատեղ աշխատանքում;
- ✓ Ուսուցիչը պետք է անվերապահորեն կատարի իր մասնագիտական պարտականությունների՝ ձգտելով համագործակցել այլ ուսուցիչների, դպրոցի խորհրդակցական մարմինների հետ;
- ✓ Ուսուցիչը պետք է պահանջկոտ լինի սեփական անձի նկատմամբ և շարունակ ձգտի ինքնակատարելագործման;
- ✓ Ուսուցիչը պետք է հետևողականորեն զբաղվի ինքնակրթությամբ, աշխատի իր որակավորման բարձրացման ուղղությամբ և որոնի աշխատանքի ավելի արդյունավետ մեթոդներ;
- ✓ Ուսումնական գործընթացի որակի բարելավման նպատակով ուսուցիչը պետք է անընդհատ կատարի մշտադիտարկում, ուսումնասիրի ոլորտի նորարարությունները;

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ✓ Դպրոցում ուսուցիչների նախաձեռնությամբ հաճախակի կազմակերպել բաց քննարկումներ, որտեղ վերջիններս հնարավորություն կունենան արտահայտվել, բարձրաձայնել առկա հիմնախնդիրները, բանակցել:
- ✓ Մշակել արդյունավետ ռազմավարություն մեթոդական միավորման անդամների միջև աշխատանքն արդյունավետ կազմակերպելու, համագործակցային միջավայր ստեղծելու համար:
- ✓ Ձեռնարկել անհրաժեշտ քայլեր մեթոդական միավորումների առավել ակտիվ անդամների հաճախակի խրախուսելու համար:
- ✓ Մեծացնել վերահսկողությունը սկսնակ ուսուցիչների աշխատանքի նկատմամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. https://aspu.am/website/images/old/upload/file/Hayecakargh.pdf
   ՀՊՄՀ, Մանկավարժական կրթության զարգացման հայեցակարգ, Երևան, 2014:
2. https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345
   ՀՀ Հանրակրթության մասին օրենք:
3. http://ipp.am/wp-content/uploads/2018/01/Research-on-Quality-of-education01.08.2017.pdf
   Կրթության որակի ընկալումները հանրակրթական համակարգում: